ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ
ՊԵՏ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի մայիսի 15-ից մինչև հունիսի 15-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի փորձագետ Էմմա Քյուրքչյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ:

- Իրականացրել եմ պաշտոնական գրությունների, տեղեկանքների և պատասխանների նախագծեր՝ ՀՀ վարչապետի աշխատակազմից, Ազգային ժողովից, պետական այլ մարմիններից, ինչպես նաև քաղաքացիներից և կազմակերպություններից ստացված դիմումների հիման վրա:

- Բաժնի ղեկավարի հանձնարարությամբ մշակվել և շրջանառության մեջ են դրվել պաշտոնական գրություններ, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր, ինչպես նաև ներկայացվել են մասնագիտական առաջարկություններ և եզրակացություններ՝ բաժնի գործառույթների շրջանակում:
- Շարունակվել է համագործակցությունը միջազգային և տեղական կազմակերպությունների հետ. մասնակցություն եմ ունեցել աշխատանքային հանդիպումների և քննարկումների՝ ուղղված ոլորտի զարգացմանը և նոր նախաձեռնությունների ձևավորմանը:
- Հաշվետու ժամանակահատվածում ակտիվ մասնակցություն եմ ունեցել ՀՀ Արմավիրի մարզում հաշմանդամություն ունեցող անձանց համար ստեղծվող առաջին Անկախ կյանքի կենտրոնի ձևավորման աշխատանքներին: Աշխատել եմ փորձագիտական խմբի հետ՝ մասնակցելով կենտրոնի հայեցակարգային մոտեցումների մշակմանը, կառուցվածքի և կառավարման մոդելի ձևավորմանը, մատուցվելիք ծառայությունների փաթեթի մշակմանը: Մասնակցել եմ Անկախ կյանքի կենտրոնի գործունեությունը կարգավորող

իրավական ակտի նախագծի մշակման և աշխատանքային քննարկումների գործընթացին, ներկայացրել առաջարկություններ կենտրոնի գործունեության իրավական հիմքերի, կառավարման, ծառայությունների կազմակերպման, շահառուների ընդունման և ուղեկցման մեխանիզմների կարգավորման վերաբերյալ: Ներգրավված եմ եղել նաև կենտրոնի գործունեությունն ապահովող ներքին կանոնակարգերի, ընթացակարգերի և կազմակերպական փաստաթղթերի նախագծման աշխատանքներում՝ նպատակ ունենալով ձևավորել իրավական և գործառնական արդյունավետ մոդել:

- Իրականացրել եմ հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և սոցիալ վերականգնողական ծառայությունների մատուցման վերաբերյալ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված («Աստղավարդ» ՀԿ, «Աուտիզմ ազգային հիմնադրամ» «Երջանկության ճանապարհ» ԲՀԿ, «Լիարժեք կյանք» ՀԿ, «Փրկություն» ԲՀԿ) հաշվետվությունների ընդունման, հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունների և համապատասխան գրությունների կազմման աշխատանքներ:
- Մասնակցություն եմ ունեցել ոլորտին վերաբերող իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրությանը և դրանց վերաբերյալ մասնագիտական առաջարկությունների ներկայացմանը:

02.07.2026թ.

Փորձագետ՝ Էմմա Քյուրքչյան